# Ավետիք Իսահակյան

## Տաիներ հետո դարձա հայրենիք.

Տաիներ հետո դարձա հայրենիք.
Աշուն էր անդորր՝ դեղին դաշտերում:
Սարերի գլխին նոր ձյուն էր իջել.
Արագիլները ճահիճների շուրջ
Հավաքվել էին չըվելու համար:
Գնում եմ մենակ մեր գյուղը խղճուկ.
Ահա մեր դռան բարդիները հին,
Լուռ օրորելով կատարները մերկ,
Հեռվից քայլ առ քայլ մոտենում են ինձ:
Մեր տունը, ավա՜ղ, ավեր է հիմա,
Ավեր-ավերակ ջրաղացը մեր,
Մի վայրկյանի մեջ տարերքը դաժան
Ջարկել չի թողել քար-քարի վրա:

Նստում եմ տխուր մեր ավեր դռան
Այն սալաքարին, ուր նստում էին
Հայրը ու մայրը, մեղմ երեկոյին:
Նստել եմ մենակ, ես հիմա արդեն,
Մենակ եմ, - չկան սիրելիներս,
Եղբայրներ, քույրեր – բոլորը չըկան:
Նայում եմ մեր տան լուռ բեկորներին –
Անցել է անդարձ, ամեն ինչ անցել,
Եվ ես էլ հիմա – ծեր եմ արդեն ես:

1926

Ղազարապատ